

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏՆԸ
(Մարի Բրոսսեի ծննդյան 200-ամյակի առթիվ)

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒՆԱՆՅԱՆ

2002 թվականին լրանում է Ֆրանսիացի նշանավոր հայագետ, արևելագետ, վրացագետ Մարի-Ֆելիսիտե Բրոսսեի ծննդյան 200-ամյա հոբելյանը: Այս ժամանակային հեռավորությունից առավել տեսանելի է դառնում նրա հայագիտական վիթխարի ժառանգության մնայուն արժեքը:



մ. Բրոսսե

Մարի Բրոսսեն եղել է եվրոպայում հայագիտության ընդգրկված առանձին գիտաճյուղի գարձրած Ֆրանսիացի արևելագետ Սեն Մարտենի արժանավոր աշակերտը և նրա գործի նվիրյալ շարունակողը: Նրա երիտասարդ ժամանակակիցը՝ նույնպես նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուան, 1869-ին մի հետազոտություն է նվիրել Վենետիկի Մխիթարյան միաբանությանը՝ Հայաստանի պատմության ու գրականության մասին ակնարկով¹: Ուսումնասիրության վերջում Վ. Լանգլուան թվարկում է եվրոպացի այն նշանավոր արևելագետներին, որոնք մեծ վաստակ ունեն հայագիտության մեջ և առաջնությունը տալիս է Մարի Բրոսսեին²:

Մարի Բրոսսեն շատ երիտասարդ հասակում է նվիրվել արևելագիտությանը՝ սկզբում չինագետ է եղել, հետո հայագետ ու վրացագետ: Չնայած վրացագիտությունը առավել գերիշխող դարձավ նրա հետազոտական ժառանգության մեջ, սակայն գիտնականը կարողացավ պահպանել նաև հայագիտության նկատմամբ ունեցած բաղմապլան հետազոտական մոտեցումները: Վրացագիտությունն ու հայագիտությունը սերտորեն կապակցվեցին նրա ուսումնասիրություններում, լրացրին միմյանց, հարստացրին երկու գիտաճյուղերն էլ:

1 V. L a n g l o i s. Notice sur le couvent Armenien de l'île S. Lazare de Venise (suivie d'un aperçu sur l'histoire et la littérature de l'Arménie). Venise, 1869.

2 Նույն տեղում, էջ 76:

Հայագետն ունեցել է հետաքրքիր կյանք, դժվարություններն ու նյութական ոչ նպաստավոր պայմանները ուղեկցել են Մարի Բրոսսերն երիտասարդ տարիքում, սակայն նա այնքան է տարված եղել իր գիտական հետաքրքրություններով, որ հենց դրանցով էլ ստացել է հոգեկան լիցքեր և դիմադրել կյանքի հարվածներին:

Ծնվել է Փարիզում, 1802 թ. փետրվարի 5-ին, վաճառական Ժան-Ֆիլիպ Ֆրանսուայի ընտանիքում: Հայրը վախճանվել է, երբ նա դեռ մի քանի ամսական էր: Մայրը՝ Աննա-Հենրիետա Բեքերը, որը սերում էր հին ազնվական տոհմից, շատ երիտասարդ ու աստվածավախ մի կին տեղափոխում է ընտանիքը Օրլեան: Մարի Բրոսսեն սկզբում հաճախում է կղերական դպրոց, ուր նա սովորում է լատիներեն, ֆրանսերեն և մի քիչ էլ հին հունարեն: Ճշգրիտ գիտությունները, ինչպես ֆիզիկան և մաթեմատիկան, ամբողջովին դուրս էին մնացել ուսումնական ծրագրից, իսկ պատմությունը կարդում էին բարձրաձայն ճաշի ժամանակ: 1817-ին նա սովորում է Փարիզի Սեն Նիկոլա սեմինարիայում, ուր մեկ տարի ուսումնասիրում է եբրայերեն և մի քիչ էլ արաբերեն: 1818 թ. ընդունվում է Մոնտուռեի ճիզվիտական դպրոցը, սակայն այնտեղ մնում է ընդամենը երկու տարի, որովհետև իր մեջ չի զգում հոգևորական դառնալու ներքին մղումը: 1821 թ. ստանում է ասարական դասարաններում ավանդող ուսուցչի վկայական, նույն տարին դիմում է Փարիզի ակադեմիայի բանասիրական ֆակուլտետ և ստանում է բակալավրի աստիճան նույն թվականի դեկտեմբերի 22-ին: Փարիզի սեմինարիայում ուսանելիս Մ. Բրոսսեն ինքնուրույն սովորում է հին հունարեն՝ Հոմերոսին բնագրով կարդալու համար: Միաժամանակ նա սովորում է չինարեն, մանջուրերեն, տիբեթերեն:

Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Եվրոպան վերածննդից հետո շրջվեց դեպի Արևելք նրա դարավոր մշակույթը յուրացնելու անկասելի մղումով:

1823 թ. Մարի Բրոսսեն խզում է կապերը հոգևոր գործունեությունից հետո՝ այդ հարցում չենթարկվելով մոր փափաղին և դառնում է արևելագետ: 1826 թ. նա թողնում է չինարենի ուսումնասիրությունը, որից բավական թվով թարգմանություններ էր կատարել, անցնում է սկզբում հայերենին (գրաբար) և հետո վրացերենին: Նույն տարում նա ամուսնանում է, սակայն կինը վախճանվում է, և նա վերստին ամուսնանում է 1831 թ. և շատ շուտով նրա ընտանիքը համալրվում է երեք երեխայով: Աճող ընտանիքի հոգսերը այն աստիճան են նեղում նրան, որ 1834 թ. մինչև 1836 թ. զրաշար է աշխատում Փարիզի Արքայական տպարանում: Սակայն անհանդիսա ու անապահով կյանքի ելևէջները մի պահ անգամ նրան չեն կտրում գիտահետազոտական աշխատանքից, և այդ հանդամանքը օգնում է նրա վերընթացին: 1836 թ. նա ընտրվում է Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի կցված անդամ, իսկ մինչ այդ արդեն Փարիզի Ասիական ընկերություն անդամ էր: 1837 թ. շրջադարձային է նրա կյանքում. նա տեղափոխվում է Ռուսաստան՝ Ս. Պետերբուրգ և հետագա դիտական դործունեությունն արդեն ծավալում է պետական հովանավորություն ներքո:

Մարի Բրոսսեն սերտ կապերի մեջ է եղել թե՛ եվրոպացի, և թե՛ հայագրի հայագետների հետ, որոնք իրենց գործունեությունը ծավալում էին Փարիզում, Վենետիկում, Վիեննայում, Մոսկվայում, Թիֆլիսում, էջմիած-

նում: 1845 թ. նա իր գիտելիքների պաշարը հարստացնելու նպատակով այցելում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզի և ծանոթանում Մխիթարյան միաբանության նշանավոր գիտնականներ Գ. Այվազովսկու և Ղ. Ալիշանի հետ: 1847–1848 թթ. իրականանում է նրա երկարամյա երազանքը՝ այցելությունը Անդրկովկաս: 1848 թ. հունվարի 11-ին Թիֆլիսից մեկնում է Երևան: Այդ ճամփորդությունը նա մանրամասն նկարագրել է իր նոթերում, որոնք լույս տեսան 1849 թ., Ս. Պետերբուրգում՝:

Հայաստանում նա կամենում էր այցելել ոչ միայն էջմիածին, այլև Գեղարզ, Խոր Վիրապ, Անի, սակայն խստաշունչ ձմեռը խանգարում է նրա ծրագրերի իրականացմանը: Նա այցելում է Երևան, էջմիածին և այն մի քանի գյուղերը, որոնցով անցնում էր դեպի Թիֆլիս տանող ճանապարհը՝ Ֆանտանկա, Ախտա, Ռնդամալ, Ջիրուխլու, Դիլիջան և այլն: Հայագետը մի առանձին հիացմունքով է խոսում էջմիածնի մասին, որտեղից հրաշալի երևում էին Արարատները, և դեպի ուր հոսում էին Արագածից սկիզբ առնող գետակները:

Եպիսկոպոս Հովհաննես Շահխաթունյանցը ջերմորեն ընդունում է գիտնականին: Նրան հատկապես հոգեկան հաճույք է պատճառում արքեպիսկոպոս Թադևոսը, որը հրաշալի ուսերենով ողջունում է նրան՝ դառնալով թարգմանիչ Բրոսսեի և մյուս հոգևորականների միջև: Բրոսսեն այցելում է Հռիփսիմե, Գայանե, Մարինե վանքերը: Նա մեծ գովարություն ուներ խոսակցական հայերենի հարցում: Գիտեր գրարարը, սակայն չդիտեր աշխարհաբարը, և ստիպված է. Շահխաթունյանցը նրա հետ խոսում է գրաբարով: Մարի Բրոսսեի հուշերում ջերմ տողեր կան այն 40 օրվա մասին, որ նա անց է կացրել Հայաստանում: Նա նույնիսկ մասնակցել է հարսանիքի, որը կատարվել է ազգային բոլոր ծեսերով: Ընդհանրապես սիրով է հիշում հոգևորականների ջերմ հյուրընկալությունն ու արտակարգ հյուրասիրությունը:

Կյանքի վերջին տարիներին մի երկարատև ցավ տանջում էր նրան, որը և 1879 թ. ստացավ շատ սուր բնույթ՝ ստիպելով դադարեցնել գիտական աշխատանքները: Նա վերջին անգամ ակադեմիա է այցելում 1879 թ. մայիսի 6-ին: 1879 թ. և 1880 թ. ձմեռը անց է կացնում ցավերի մեջ, և գարնանը ընտանիքի ստիպմամբ մեկնում է ավելի մեղմ կլիմա ունեցող Փրանսիա: Նա թողնում է Պետերբուրգը 1880 թ. մայիսի 20-ին և մեկնում է Շատելյո փոքրիկ քաղաքը՝ իր ավագ գստեր՝ Հենրիետտա Բուտենի մոտ: Երեք ամիս անց՝ 1880 թ., նա վախճանվում է հայրենիքում՝ կյանքի յոթանասունիններորդ տարում:

Մարի Բրոսսեի որդին՝ Լորեն Բրոսսեն, 1887թ. Ս. Պետերբուրգում հրատարակում է իր հոր գիտական ժառանգության մատենադիտությունը: Դրա հիման վրա մեծ հայագետի ծոռը պատրաստել է կենսամատենագիտական մի էսքիզ, որը Մ. Բրոսսեի գիտական ժառանգության սխտեմատիկ մատենագիտությունն է: Այն լույս է տեսել 1999 թ.՝ Թիֆլիսում,

3 M. B r o s s e t. Rapports sur un voyage Archéologique dans la Géorgie et dans l'Arménie (exécuté en 1847-1848). SPb., 1849.

Ֆրանսերեն և վրացերեն լեզուներով⁴: Այս գրքում նշված է, թե բացի Կայսերական Ակադեմիայի և Ռուսաստանի Հնագիտական կայսերական ընկերության անդամ լինելուց էլ ինչ գիտական միությունների և ակադեմիաների անդամ է եղել նա և ինչ պարգևներ է ստացել: Այսպես՝

1825 – Փարիզի Ասիական ընկերության անդամ, իսկ 1850 թ.՝ արտասահմանյան անդամ:

1829 – Օրլեանի Գիտության, գրականության և արվեստների թագավորական ակադեմիայի անդամ:

1843 – Հյուսիսի Հնագիտական թագավորական ընկերության անդամ (Կոպենհագեն):

1843 – Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի խորհրդակից անդամ:

1844 – Ռուսական Հնությունների և պատմության կայսերական ընկերության պատվավոր անդամ:

1845 – Վենետիկի Մխիթարյանների ակադեմիայի անդամ:

1847. – Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության անդամ:

1856 – Նանսի Գիտության, գրականության, արվեստների ակադեմիայի թղթակից անդամ:

1859 – Փարիզի Ամերիկյան և Արևելյան ազգագրական ընկերության պատվավոր անդամ:

1866 – Բեռլինի Գիտությունների թագավորական ակադեմիայի թղթակից-անդամ:

1869 – Մոսկվայի Հնագիտական ընկերության անդամ:

1873 – Կովկասյան Հնագիտության սիրողների ընկերության անդամ:

Բրոսսեն 1836–1879 թթ. ստացել է ռուսական և արտասահմանյան առաջնակարգ շքանշաններ՝ ոսկուց և ազամանդակուռ: Նա ստացել է Սուրբ Աննայի երեք աստիճանի շքանշաններ: Ըստ որում առաջին աստիճանը երկու անգամ: Դրանցից մեկը ստացել է 1847-1848 թթ. Վրաստան և Հայաստան կատարած ուղևորության համար: Սուրբ Աննայի և Սուրբ Վլադիմիրի շքանշաններն իրենց հետ ունեին ազամանդակուռ ոսկե մատանիներ և ծխախոտատուփեր: Վերջին այդպիսի թանկարժեք պարզևր ոսկյա ազամանդակուռ ծխախոտատուփը, նա ստացել է 1879 թ.:

Մարի-Ֆելիսիտե Բրոսսեի կյանքը գիտությանը անմնացորդ նվիրված հզոր հոգեկան լիցքեր ու մեծ կենսասիրություն ունեցող մարդու օրինակելի մի կենսապատում է, որն իր լուսավոր կետերով կարող է ընդօրինակվել հետագայի գիտնականների կողմից:

Մ. Բրոսսեի հայագիտական հետաքրքրությունների լայն շրջանակը նկատելի է դեռևս Ղևոնդ Ալիշանը⁵: Գիտնականն ուշադիր հետևել է հայ ժողովրդի պատմության հետ կապվող ամեն մի փաստի ոչ միայն Հայաստանում, այլև նրա տարածքից դուրս: 1831-ին Սեն Մարտենը հրատարակում է Վոլգայի բուլղարների տարածքում դտնված մի քանի գերեզ-

4 Marie-Félicité Brosset: Biobibliographie. Esquisse biographique littéraire et bibliographique systématique des ouvrages. Tbilissi, 1999.

5 Ո Ր Ք Ո Ն Ի. Պատկերազարդ Բազմավէպ. Վենետիկ, 1900, էջ 14:

մանների հայերեն արձանագրություններ: Այդ արձանագրություններից մեկում նա կարդացել է թվականը՝ 1435 և թաղվածի անունը՝ Հարություն: Բրոսսեն, կարդալով այդ արձանագրությունները՝ ուղղել է թիվը՝ 1335⁶: Դրանով ապացուցվում է Վուլգայի բուլղարների և հայերի մեջ եղած առավել հնագույն կապերի իրողությունը: Հայագետը նմանօրինակ այլ արձանագրություններ նույնպես քննել է, թարգմանել, դրել եվրոպական գիտությունների շրջանառության մեջ՝ գրանց միջոցով լույս սփռելով հայ ժողովրդի պատմության կնճռոտ հարցերի վրա: Նա նաև վերծանել է մի քանի սեպագրեր:

XIX դ. երկրորդ կեսին եվրոպական գիտության մեջ արդեն սկսում է ձևավորվել ուրարտագիտությունը: Անդրկովկասում և պատմական Հայաստանի ողջ տարածքում ուղղակի սփռված էին սեպագիր արձանագրությունները:

1862 թ. Կաստները Հայաստանում ճամփորդելիս Արմավիրի մոտ՝ Քասախ դետի ափին, գտնում է սեպագիր արձանագրություն, դրանից հետո մեկ ուրիշը՝ Մարմաշեն վանքի մոտ: Նա ուշագիր նկարում է այդ սեպագրերը և նամակով ուղարկում Պետերբուրգ, էրմիտաժ թանգարանի բաժիններից մեկը: Ակադեմիկոսներ Բրոսսեն և Կունիկը հրավիրվում են վերծանելու սեպագիրը, վերջիններս այդ սեպագրերի և Շուլցի՝ Վանա լճի մոտ գտած արձանագրության մեջ տեսնում են նմանություններ:

Բրոսսեն սեպագիրը հասկանալու համար գիմել է հայ պատմիչների գործերին, որպեսզի հասկանա Հայաստանի վաղնջական անցյալը: Հայ պետական գործիչները հարաբերություններ են ունեցել Ասորիքի, Բաբելոնի և Պարսկաստանի հետ⁷: Բրոսսեն համոզված է, որ այդ սեպագրերը խոսում են Արարատի երկրի, այսինքն Հայաստանի մասին⁸: Այդ արձանագրություններում խոսվում է Ասորեստանի թագավորների (Սարգանապալ III, Սալմանասար VI, Սարգոն և այլն) Հայաստան կատարած արշավանքների մասին:

Հայագետն ուսումնասիրել է նաև հայկական օրենսգրքերը: Մ. Բրոսսեն նկատել է այն հատվածները, որոնք համընկնում են վրացական և հայկական օրենսգրքերում: Դեպի Անդրկովկաս կատարած ճամփորդության երրորդ զեկուլցի մեջ հայագետը մեջբերում է այն հատվածները, որոնք Մ. Գոշի «Դատաստանագրքից» բառացի անցել են վրաց արքայազն Վախթանգի կազմած «Հավաք օրինացի» մեջ⁹:

1839 թ. Մ. Բրոսսեն մենագրություն է նվիրել հայկական դրամներին՝ ներկայացնելով դրամագիտության բնագավառում իր հմտությունը ևս¹⁰: Նրա կարծիքով դրամների աշխարհը այնքան անսպառ նյութ ունի իր մեջ, որ ոչ ոք չի կարող մեծամտանալ և ասել, թե ինքն ամեն ինչ ասել է:

6 Note sur les inscriptions armeniennes sur les tombeaux de Bolgharis. SPb., 1838.

7 Մ ո վ ս ե ս ի ո ռ ե ն ա ց ի. Պատմություն Հայոց. Երևան, 1981, էջ 106:

8 M. B r o s s e t. Sur l'histoire ancienne de l'Armenie d'apres les textes hieroglyphique et cuneiformes.— "Bulletin de l'Academie imperial des sciences de SPB (այսուհետև՝ "Bulletin"), XVI, 1871, pp. 332-340.

9 M. B r o s s e t. Rapports sur un voyage Archeologique..., p. 78-79.

10 M. B r o s s e t. Monographie des monnaies Armeniennes. SPb., 1839.

Բրոսսեի կարծիքով հմուտ դրամագետներ համարվածները, որոնք զբաղվում են Արևելքի դրամներով, երբեմն դրանք չեն էլ ունենում իրենց ձեռքի տակ, բավարարվում են դրանց մասին խոսելով միայն ըստ նկարների, որոնք երբեք չեն բացահայտում դրանց ճշմարիտ արժեքը: Ռուսաստանն այս առումով ունի ավելի մեծ հնարավորություններ: Դրամները բացում են մարդկանց առաջ դարաշրջանի գաղտնիքները և հայտնադործում պատմական ճշմարտությունը:

Հայագետի կարծիքով Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ասիական թանգարանը հարուստ է Արևելքի դրամների հավաքածուներով, և ինքը հուսով է, որ դրանց մասին կլինեն համապատասխան ուսումնասիրություններ:

Բրոսսեն բավարարվում է մասնագետների ուշադրությունը հրավիրելով մի քանի մոռացված փաստերի վրա և կանգ է առնում մի շարք հայկական գրամների մանրազնին ուսումնասիրության վրա: Հենց գրամների օգնությամբ է հայագետը հաստատում հայ պատմիչների հազորդածր Աղվանքի թագավորների հայկական ծագման վերաբերյալ: Հենվելով Բրոսսեի փաստերի վրա՝ այդ խնդրին անդրադարձել է նաև Վիկտոր Լանգլուան, որը հմուտ դրամագետ էր: Նա դրել է Աղվանքի հայ Բադրատունիների դինաստիային պատկանող մի պղնձե դրամի մասին¹¹:

Մ. Բրոսսեն իր մենագրության մեջ մանրամասն նկարագրել է Կիլիկյան Հայաստանի 18 դրամներ, որոնք պատկանել են Լևոնին, Հեթումին և Օշինին: Նա նկարագրում է դրամների դրոշմերի ամենաչնչին մանրամասն անգամ: Դրամներից երկուսը արարատում են՝ դրոշմված Սիս քաղաքում¹²: Ուսումնասիրությունների վերջում Բրոսսեն նկարագրում է հայկական նահանգի գինանշանը հաստատված 1833 թ. Ռուսաստանի Սենատի կողմից՝ նշելով, թե Անդրկովկասի ժողովուրդներից միայն հայերն ունեին իրենց գինանշանը՝ Արարատով, էջմիածնով, Նոյի տապանով, արքայական թագով: Ինչպես տեսնում ենք, Մարի Բրոսսեն հայ ժողովրդի անցյալը կապում է նրա ներկայի հետ և գինանշանի նկարագրի մեջ դնում է ազգային ուժի ինքնահաստատ իրողությունը¹³:

Հայ միջնադարյան դրականության մասին ամբողջական պատկերացում տալու համար Մարի Բրոսսեն 1840 թ. ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով հրատարակում է էջմիածնի գրացուցակը, որով հայ մատենագրության արժեքները դիտական շրջանառության մեջ է դնում Ռուսաստանում և Եվրոպայում¹⁴:

Ֆրանսիացի հայագետը նկարագրել է Հաղպատ-Սանահինի վանական համալիրները, ֆրանսերեն թարգմանել դրանց արձանագրությունները՝ կապելով դրանց բովանդակությունը Հայաստանի և Վրաստանի պատմության հետ: Նա օգտվել է հայ պատմիչների հազորդումներից, վիմա-

11 V. L a n g l o i s. Une monnaie de Gorig, dynaste Bagratide de l'Albanie Armenienne (Lettre de M. Victor Langlois à M. R. Chalon, président de la Societe royal de numismatique, Paris, 14 février, 1886).

12 M. B r o s s e t. Monographie des monnaies Armeniennes, p. 40.

13 Նույն տեղում, էջ 44:

14 Catalogue de la Bibliothèque el Edchmiadzin. SPb., 1840.

գրագետների երկերից, թարգմանել է Սարգիս Զալալյանցի և Հովհաննես Ղրիմեցու համապատասխան երկերը¹⁵: Նշված վանքերը հայագետը համարում է հայ-վրացական մշակութային կապերի խորհրդանիշ, հաշվում է դրանց վրա եղած արձանագրությունները՝ 225 հատ: Ըստ Բրոսսեի, վանքերի պատմությունը նաև դրանց առաջնորդների պատմությունն է, արձանագրում է գրանց հաջորդականությունը դարերի վազքի մեջ: Նա հենվում է վանական արձանագրությունների և հայ պատմիչների հաղորդած փաստերի վրա ու հավաստում, որ երկու վանքերն էլ կառուցվել են Աշոտ Ողորմածի ժամանակ (955–977թթ.), և նրա կառուցողը եղել է հայոց թագուհի Խոսրովանույշը:

Հայաստանի Անի մայրաքաղաքը Մ. Բրոսսեին հետաքրքրել է նրա հայագիտական գործունեության ողջ ընթացքում: Նա այգպես էլ չկարողացավ այցելել Անի, սակայն այն տեսավ հավաքական մի ամենատես հայացքով և նկարագրեց սրտալի, հիացական, հարազատ զգացմունքներով: Մարի Բրոսսեն տեսավ իր Անին և խորապես ափսոսեց նրա անկման համար, որպես մարդկության քաղաքակրթության կորստի համար, հինավուրց մի ժողովրդի հրաշքի կործանման համար:

Անի մայրաքաղաքի որպես հայ ժողովրդի ազնվական կյանքի հնագույն օրրանի և հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած դերի սպառիչ նկարագիրը տվել է Ն. Մառը¹⁶: Մեր խորին համոզմամբ Անի քաղաքի անցյալը առավել սպառիչ բացահայտելու ներշնչանքը Ն. Մառը ստացել է Մ. Բրոսսեի «Անիի ավերակները» երկհատոր գրքից: Անին Բրոսսեին հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ բացահայտելու հայ ժողովրդի անցյալի մասին ունեցած իր խոր ու բազմակողմանի գիտելիքները: Բրոսսեն նկարագրում է 1001 եկեղեցիների քաղաքը, որը համաշխարհային հռչակ ունեցող, փայլում էր ադամանդի պես, դյուրեմ ու հրապուրում բոլորին իր շքեղությունը, հարստությունը, քաղաքակրթությանը: Նա պատկերում է Անիի պարիսպները, պալատական շինությունները, գետնուղիները, իշխանական կյանքը, ներքին և արտաքին քաղաքական հակասությունները, Անիի անկման աստիճանականությունը, նրա բնակիչների հետագա ճակատագիրը¹⁷: Նա դնում է նկարներ, գծագրեր, հատակագծեր, արձանագրություններ, բերում բազմաթիվ վկայություններ: Մ. Բրոսսեն ստեղծեց Անիի պատմության առաջին մեծ տարբերակը, որով յուրովի ամփոփեց անիագիտության առաջին փուլը, նախապատրաստեց հայագետների հետագա հետազոտական ընթացքը: Այսօր էլ Անին շարունակում է

15 Ս ա Ր գ ի ս Զ ա լ ա լ յ ա ն ջ . Ծանապարհորդութիւն ի մեծն Հայաստան. մասն Ա. Տփիսիս, 1842, Հ ո վ հ ա ն ն ե ս Ղ Ր ի մ ե ջ ի . Պատմութիւն հռչակավոր վանից Հաղբատայ, Ս. Նշանին, հրատարակէց Հ. Համազասպ Ոսկէան. Վիեննա, 1965, Մ. B r o s s e t . Notice historique sur les couvents Arméniens de Haghbat et de Sanahin (lu le 6 avril 1842).

16 Н. М а р р . Ани, столица древней Армении (Историко-археологический набросок): տե՛ս Тексты и разыскания по армяно-грузинской филологии. Книга первая, СПб., 1900, с. 197, 222. N i c o l a s Y a s o v l e v i c h M a r r . Ani. Reve d'Armenie (préface professeur Parouyr Mouradian). Paris, 2001.

17 М. В r o s s e t . Ruines d'Ani, capitale de l'Arménie sous les rois Bagratides aux Xe et XIe s, histoire et description. SPb., I partie, 1860, II partie, 1861.

գրադեցնել գիտնականներին, նրա մասին գրվում են նոր հետազոտություններ, վերահրատարակվում հները, որոնք իմաստավորում են հայ միջնադարյան շքեղաշուք մայրաքաղաքի լինելիության հրաշքը¹⁸:

Մարի Բրոսսեի մեծագույն ծառայությունը հայագիտությանը «Հայ պատմիչների գրադարան» ստեղծելն էր ֆրանսերեն լեզվով: Նա թարգմանել է Մադաքիա Աբեղայի, Ուխտանեսի, Կիրակոս Գանձակեցու, Թովմա Արծրունու, Առաքել Դավրիժեցու, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի, Զաքարիա Սարկավագի, Աբրահամ Կրետացու, Եսայի Հասան Զալալյանի, Սամվել Անեցու երկերը, ինչպես նաև Դավիթ Բեկի պատմությունը: Անդրադարձել է Հովհաննես Ծարեցու «Աղվանքի պատմությանը», ինչպես նաև Վարդան Մեծի կամ Արևելցու «Պատմություն տիեզերական» երկին: Պատմիչների թարգմանության խնդիրներում նա Վիկտոր Լանգլուայի ստեղծած դպրոցի հետևորդն է:

Մարի Բրոսսեն Հայ պատմիչների թարգմանություններին մոտեցել է ամենայն պատասխանատվությամբ, երբ արդեն երկար ճանապարհ էր անցել հայագիտության և վրացագիտության մեջ: Նա որպես գիտնական ուներ մի հիանալի հատկություն, սիրում էր կարդալ իրեն ժամանակակից հայագետների աշխատությունները, գրախոսում էր դրանք, յուրացնում, հիանում ուրիշի կատարածով, երկար ժամանակ իր ուղեղի գանձարանում հավաքում գիտելիքները և ապա դրանք միանգամից շարադրում ու վերստին դիմում աղբյուրներին, երբ անհրաժեշտ էր մեջբերում կատարել: Բրոսսեն երբեք չէր մտածում, թե ինքը կատարել է կատարյալն ու անթերին, սակայն ձգտում էր դրան ողջ հոգով, մտքի ամբողջ տարողությամբ. դա նրա կյանքն էր: Նրան երբեմն դիտողություն են արել չափից ավելի շատ ծանոթագրություններ կատարելու համար, սակայն նա շարունակել է իր մանրակրկիտ բանասիրական պրպտումները, նշելով այն աղբյուրները, որոնցից օգտվել է:

Հայ պատմիչների թարգմանությունները, նախքան առանձին գրքերով լույս տեսնելը կամ ընդհանուր հատորների մեջ ամփոփելը, Բրոսսեն հրատարակում էր Ռուսաստանի գիտական կարևորագույն պարբերականում՝ Կայսերական ակադեմիայի գիտությունների տեղեկագրում: Նա իր կյանքի վերջին տարիներին հասցրեց երկու տարողունակ հատորներում հրատարակել Հայ պատմիչներից մի մասի գործերը¹⁹: Թովմա Արծրունու պատմությունը Բրոսսեն ենթարկել է մանրամասն քննության²⁰: Ընդհանրապես բոլոր պատմիչներին քննելիս Բրոսսեն հայոց պատմությունը կապում է Ասիայի համընդհանուր պատմության հետ՝ որպես նրա մի կարևոր օղակ: Մ. Բրոսսեն հետազոտության վերջում, իր կարծիքով, ներկայացնում է Թովմա Արծրունու պատմությանը վերաբերող մի ցնցող նշանակություն

18 Ani, capitale de l'Arménie en l'an mil, Ouvrage realise sous la direction de Raymond H.Kevorkian, Pavillon des Arts, 7 fevrier-13 mai 2001. "Ani capitale de l'Arménie en l'an mil" est placee sous le haut patronage de Monsieur Jacques Chirac, President de la Republique Française.

19 M. B r o s s e t. Collection d'historiens Armeniens. T. I, SPb., 1874; t. II, SPb., 1876.

20 M. B r o s s e t. Notice sur l'historien armenien Thoma Ardzrouni, Xe s.– "Bulletin", T. IV, SPb.

ունեցող գիտարկում²¹: Նա համոզված է, որ պատմություն ուշադիր ընթերցումը երևան է հանում Աշոտի և Գագիկի պատմության երկրորդ հեղինակին: Ճիշտ է, ոճական ձևերը մնում են գրեթե նույնը, միշտ աստվածաշնչային, սակայն գրքի վերջին հատվածները հուշում են մի այլ հեղինակի գոյությունը: Որպես եզրակացություն՝ Մ. Բրոսսեն շեշտում է, թե թովմա Արծրունին եղել է լուրջ և ճամարտապատում պատմիչ, միայն թե չի սիրել Բագրատունիներին և այդ պատճառով լուրջության է մատնել Արծրունիների համար ոչ պատվարներ մի շարք գործեր: Նրա կարծիքով Արծրունու ոճը հիշեցնում է հայ պատմիչներին, երբեմն Հովհաննես կաթողիկոսին, և նրա երկում ուժեղ է կրոնական երանգը: Բայց այդ երկը շատ կարևոր է հայ ժողովրդի պատմության և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Արևմտյան Ասիայի անցյալի հարցերով:

Բրոսսեի հայագիտական նվաճումներից է XIII դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պատմության ֆրանսերեն թարգմանությունը երկու ստվարածավալ հատորներով՝ բնագիր և ծանոթադրություններ²²: Մ. Բրոսսեն նախքան իր թարգմանությունը հրատարակելը և առանձին գրքով ծանոթագրելը, ահռելի նյութ է հավաքել: Նա հատկապես օգտվել է Մ. Չամչյանի «Հայոց պատմությանը» կցված քարտեզից, Ղ. Ալիշանի հրատարակած Մեծ Հայքի ատլասից, ուր երևում է Սյունիքի աշխարհագրական ու ուղեիկ հատակագիծը՝ նրա լեռների բարձրությունը, Ղ. Ինճիճյանի աշխարհագրությունից, Շահնազարյանցի «Ժամանակակից Հայաստան» աշխատությունից, Ղևոնդ Ալիշանի «Սիսականից», «Մեծ Հայքից», Սարգիս Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» գրքի II հատորից և այլն: Մ. Բրոսսեն նշում է, թե իր օգտագործած գրքերից բազմաթիվ քաղվածքներ կլինեն: Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի սլատմությունը» գրքի Մ. Բրոսսեի ծանոթագրությունների հատորը գրված է այնպիսի դիտողական մանրամասներով, որ թվում է, թե հեղինակը ճամփորդել է նկարագրված տեղանքով, ականատես եղել որոշ հերոսամարտերի: Նա ճշտորեն վերականգնել է Ստեփանոս Օրբելյանի կենսագրությունը, արձակ հրատարակել է պատմիչի ողբը՝ նվիրված Վաղարշապատի կաթողիկե եկեղեցուն, բնութագրել է Հայաստանի պատմության այդ ժամանակահատվածի վանական մշակութային կենտրոնները: Հայագետի «Սյունիքի պատմությանը» կցված ընդարձակ հետազոտության մեջ սերտորեն շաղկապվում են Սյունիք և Արցախ տարածքները՝ որպես Մեծ Հայքի իրար առավել ներհյուսված քաղաքական, կրթական, մշակութային և տնտեսական միավորներ:

XIII դ. հայ պատմիչ Մխիթար Այրիվանեցուն Մ. Բրոսսեն նվիրել է երկու կարևոր հրապարակում²³, որոնք իր ժամանակի առումով բոլորովին նոր խոսք էին այդ պատմիչի վերաբերյալ: Նա ասում է, թե ինքը ձեռքի տակ ունի 1860 թ. Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության օրինակը:

21 Նույն տեղում, էջ 748:

22 M. Brosset. Stephannos Orbelian, Histoire de la Siounie. T. I, SPb., 1864; t. II, SPb., 1866.

23 M. Brosset. Etudes sur l'historien armenien Mkhitar d'Airivank. XIIIe. — "Bulletin", T. IV, SPb., 1865.

Հայագետը նկատում է, որ Մխիթար Այրիվանեցին խմբում է փաստերը համաժամանակյա ձևով, մի նմանը չունեցող մեթոդով: Նրա ցանկերում կան աստվածաշնչային կերպարներ, աշխարհիկ դեմքեր, հայոց ազգի կաթողիկոսներ, որոնց անուններն ուղղակի վերցրել է հորենացու «Հայոց պատմութիւնից», և հասել է մինչև Նաբուգոդոնոսոր և Ալեքսանդր Մակեդոնացի: Նա թվարկում է ասորական, եգիպտական և հունական թագավորական գերդաստաններ: Մ. Բրոսսեն համեմատել է Մխիթար Այրիվանեցու և Վարդան Մեծի պատմութիւնները ու ենթադրել, թե նրանք իրենց պատմութեան առաջին մասում օգտվել են նույն աղբյուրից, միայն թե Մխիթարը հաղորդում է համառոտ, իսկ Վարդանը ընդարձակ ու քննադատարար: Հայագետը երկար էջերում քննում է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրական մեթոդը:

Ինչ-որ տեղ Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութիւնը թողնում է համառոտ պատմական ձեռնարկի տպավորութիւն, ուր քրիստոնեական աշխարհը երևում է իր հին և նոր ուրվագծերով: Իր բազմաթիվ ցանկերի մեջ Այրիվանեցին դրել է նաև հայ պատմիչների ցուցակը իրեն կիրակոս Գանձակեցուց հետո համարելով 34-րդ պատմիչը: Պատմութեան վերջում նա դրում է. «Իսկ թէ այս այսպէս է՝ որպէս և է իսկ, ապա զի՞նչ պարտ է ասել վասն ի սկզբանէ աշխարհի անցիցն անցելոց, եթէ դրեալ էին: Իսկ մենք քայլելով ի վերայ ժամանակադրաց անհուն զրուցաց քաղելով զմի ի հազարաց և գերկուս ի բիւրոց, ըստ կարի հասու արարաք գձեզ»²⁴:

Մ. Բրոսսեն իր հետազոտական աշխատանքներում անպայման մեծ ուսուցիչ է: Նա ասում է, թե ինքը հասու չէ բացատրել, թե աստվածաշնչային պատմիչները գերբնական ներշնչանքի տակ ինչ պատասխանատվութեամբ են գրել ժամանակի մասին: Բառերն ու լեզուն, որոնք ծառայել են այդ հեղինակներին, մարդկութեան բառերն ու լեզուն են, բայց դրանք պետք է կարգալ խելացիորեն՝ բարեխղճորեն վերլուծելով: Չպետք է անտեսել, որ նոր թվականութեան ճարտար ժամանակագիրը՝ եվսեբիոսն, ասում է, թե իր ժամանակ Լիբանանի ամենաբարձր լեռներում հայտնաբերել են արձանագրութիւններ ունեցող քարեր: Այն դիրք է՝ ուսումնասիրված ու տարբեր ձևերով հասկացված մասնագետների կողմից, որը պարունակում է ջրհեղեղից առաջ եղած փաստեր և հասնում է մինչև քրիստոնեական ժամանակները՝ տարբեր պատումներով: Մանրամասները վիճելի են, խորքը մնում է բոլոր ազգեցութիւններից դուրս²⁵:

Իր եզրակացութեան մեջ հմուտ հայագետը հույս է հայտնում, թե հետաքրքրասեր ընթերցողը իր հետազոտութիւնից կարող է օգտակար տեղեկութիւններ քաղել:

Բրոսսեն թարգմանել է նաև Ուխտանեսի երկը: Ուխտանեսը ըստ Բրոսսեի X դ. պատմիչ է: Նրա երկը քննելիս հայագետը փորձում է լուծել մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են ասորագիտութեանը, վրացագի-

24 Մ խ ի թ ա ր Ա յ ը ի վ ա ն ե ց ի. Պատմութիւն հայոց. Մոսկվա, 1960, էջ 69:
25 Նույն տեղում, էջ 398:

տուլթյանը, հրեաներին, հայագիտությանը, նա այդ հարցերում ունի խիստ ուշագրավ գիտական եզրակացություններ²⁶:

Ուխտանեսը հայ եպիսկոպոս է, որի պատմության ձեռագիր օրինակը Ասիական թանգարանում պահպանվել է հետևյալ խորագրով՝ «Պատմություն երեք մասից՝ դրված Տեր-Ուխտանես եպիսկոպոսից՝ նարեկ վանքի վանահայր Անանիայի խնդրանքով»:

Առաջին մաս – Մեր թագավորներն ու հայրապետները

Երկրորդ մաս – Բաժանում վրացի հայոց

Երրորդ մաս – Ծաղ կոչված ազգի մասին:

Ասիական թանգարանի ունեցած պատճենը ձեռք է բերվել 1847-ին Գիտությունների կայսերական ակադեմիայի համար՝ էջմիածնի վանքի գրադարանից: Այդ օրինակի մեջ ամբողջովին բացակայում է պատմության երրորդ հատվածը:

Բրոսսեն հայ տոմարի հեղինակներ է համարում 20 գործչի, որոնք թվականները գնում են ի նկատի ունենալով հայ կաթողիկոսների, պարսից արքաների և մարգպանների կառավարման թվերը: Հայագետն այս հետազոտության մեջ էլ վերստին խոսում է Հովհաննես Սարկավազի մասին՝ որպես հայկական տոմարի կարգավորողի: Հովհ. Սարկավազը եկեղեցու կողմից 1084-ին ընդունել է տալիս անշարժ տոմարը՝ հայոց ամիսները հարմարեցնելով հռոմեականին և հունականին:

Բրոսսեն առանձին քննում է հայ պատմիչ Ուխտանեսի պատմության մի հատվածը, որը վերաբերում է նաբուզողոնոսոր թագավորի Իբերիա հրեաներ բերելու փաստին: Կիրակոս Գանձակեցու պատմությունը Մ. Բրոսսեն հրատարակել է Ուխտանեսի բնագրի հետ միասին և դրա առիթով ներկայացնում է իր տրամաբանական բացատրությունները: Երկու հայ պատմիչները չունեն իրենց ապրած ժամանակի ընդհանրությունը. նրանք ապրել են XIII և X դարերում, և յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում Հայաստանի հին պատմությունը: Երկուսի օգտագործած աղբյուրների համակարգը տարբեր է: Իր պատմության երկրորդ մասում Կիրակոսը տեսանելի ձևով ներկայացնում է մոնղոլների հարձակումը իր երկրի վրա: Ուխտանեսը պատմում է կարևորագույն դեպքի մասին՝ հայ և վրաց եկեղեցիների բաժանման մանրամասները, որը տեղի է ունեցել մեր թվականության 596-ին: Նրա պատմածը փաստացի է:

Նա բացատրում է, թե մի գրքի մեջ երկու տարբեր դարաշրջանի հեղինակներին զետեղելն ունի հատուկ մտածված նպատակ: Այդ երկու հեղինակները իրեն հնարավորություն են տալիս հարստացնել Վրաստանի տարեգրությունները, որովհետև բազմաթիվ հայ պատմիչներ խոսում են այդ երկրի մասին: Հայ պատմիչները եղել են նշանավոր վարդապետներ, որոնք հաճախ իրենք ականատեսներ էին և գրիչ են վերցրել ամենայն պատասխանատվությամբ՝ շարադրելու իրենց հայրենիքի պատմությունը: Այսպես, օրինակ, Խորենացին գնացել է մինչև հնադար, Աղաթանգեղոսն ու Փ. Բուղանդը նկարագրել են IV դ., Ասմվել Անեցին պատկերել է իր ժամանակի դեպքերը: Որոշ պատմիչներ արտահայտել են իրենց ատելությունը

26 M. B r o s s e t. Deux historiens Arméniens, Kirakos de Gantzag, XIIIe, Histoire d'Arménie, Oukhtanes d'Ourka, Xe. Histoire en trois parties, SPb., 1870.

Քաղկեդոնի ժողովի նկատմամբ, ինչպես Հովհաննես Դրասխանակերտցին, Մովսես Կաղանկատվացին, Միքայել Ասորին:

Բրոսսեն նկատում է Կիրակոս Գանձակեցու երկում եղած որոշ խորհրդանիշեր: Հայագետի համար կարևոր չեն հայ մատենագրի պատմական չափանիշները, նրան հետաքրքրում են պատմական փաստերը: Կիրակոսը հետաքրքիր ձևով ներկայացնում է իր ապրած ժամանակի Հայաստանի դեպքերը, Աղվանքի և Վրաստանի իրադարձությունները, մոնղոլների արշավանքները, խոսում է վրաց , հայ իշխանների, օտար նվաճողների մասին, որոնք մեծ դեր են կատարել XIII դ. կեսերին: Նա պատմում է Կիլիկիայի թագավոր Հեթումի այցելությունը թաթարական խանի նստավայր, որի մանրամասները ցարդ լուսաբանված չեն: Նկարագրում է 1139 թ. Գանձակի երկրաշարժը, Գեորգիի արշավանքը քաղաքի վրա, Քուլթայիսի մոտ գտնվող տաճարի շինարարությունը, մանրամասներ է հայտնում Հուլյադու խանի Բաղդադի արշավանքի մասին:

Նախքան XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու պատմությունը քննելը, Բրոսսեն, ելնելով իր երկարամյա գիտական որոնումներից, կատարում է հայագիտությունը նպաստ բերող ընդհանուր գիտարկումներ:

Հետաքրքիր են Մ. Բրոսսեի խոհերը հայագետ դառնալու բարգուծյան հետ կապված: Նրա կարծիքով շատ քչերը կարող են տանել հայագիտություն ծանր բեռը, բացի այդ, ժամանակը նպաստավոր չէ գրական ձեռնարկումների համար, հատկապես այնպիսիների, որոնք պահանջում են մեծ գումարներ: Բրոսսեն ուղղակի հրապարակավ գրում է, թե ինքն իր կյանքի վերջին օրերը նվիրել է Վիկտոր Լանգլուայի գաղափարների իրականացմանը. Կայսերական ակադեմիայից արտոնություն է ստացել հրատարակելու հայ պատմիչներին և արդեն հրատարակել է Ստ. Օրբելյան, Մադաքիա Արեղա, Կիրակոս Գանձակեցի և Ուխտանես: Մ. Բրոսսեն խոստովանում է, որ ինքը թուլություն ունի հայ վարդապետ պատմիչների նկատմամբ, ընդունում է նրանց ճշգրիտ չափանիշները, որպես ժամանակակիցներ, հաղորդած փաստերի վավերականությունը: Հայ պատմիչները կարևոր փաստեր են հաղորդում Սասանյանների, սելջուկների, մոնղոլների, խաչակիրների, բյուզանդացիների, ավելի մոտ ժամանակներում թուրքերի և պարսիկների մասին: Նրանք ունեն ժամանակագրական ճշգրտություն, բայց անխուսափելի են սխալները և արտագրողների մեղանշումները: Բրոսսեն նշում է, թե Առաքել Դավրիժեցու գիրքն ընդգրկում է մոտ 60 տարվա ժամանակահատված: Առաջին թվականը, որ նշում է պատմիչը՝ 1602-ն է, սակայն նա խոսում է ավելի վաղ կատարված իրագարձությունների մասին, նշում Առաքել կաթողիկոսի գալուստը, որը տեղի է ունեցել 1584 թ.: Նրա պատմության վերջին թիվը 1664-ն է, սակայն հիմնականում նկարագրել է 1602–1661 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները՝ ուրեմն 59 տարվա²⁷: Հայագետը բացատրում է նաև, թե ինչ է նշանակում Առաքել անունը: Հայերենով այն նշանակում է ուղարկված («envoye, apotre»), բառը ենթարկվել է հնչյունափոխության՝ Առաքեալը դարձել է Առաքել: Բրոսսեն կարճառոտ ծանոթացնում է Առաքել

27 A r a k e l d e T a u r i s, annote par M. Brosset. SPb., 1873, p. 19.

Դավրիժեցու գրքի բովանդակությանը, գնահատում ոճական արժեքը, որոշում ճշգրտության աստիճանը, նշում հեղինակի տեղը հայ մատենագրության մեջ և խոսում պատմության տպագրությունների մասին: Դավրիժեցու երկը բաղկացած է ընդամենը 58 գլխից, որից 52-ը ամբողջովին պատմական են:

Առաջել Դավրիժեցու երկը, ինչպես նաև մյուս պատմիչների մատյանները Բրոսսեն քննել է տարբեր դիտակետերից՝ կապելով այն իր ժամանակի ընդհանուր պատմագրության հետ:

Մ. Բրոսսեն իր աշխատություններով դեռ XIX դ. կեսերից դարձել է հայ գիտնականների ուղեկիցը, նա իր այդ դերը կատարում է նաև մեր օրերում, դա կարելի է հետազոտմամբ տեսնել առանձին հեղինակների աշխատությունների տողատակերում, մեջբերումներում, առաջաբաններում:

Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, ինչպես նկատել է նրա կյանքը գեղարվեստորեն անմահացրած Գաստոն Բուաչիձեն, ծնվել է նույն տարին, ինչ Ֆրանսիական գրականության երկու վիթխարի դեմքերը՝ Վիկտոր Հյուգոն և Ալեքսանդր Դյուման²⁸: Զարմանալի ձևով իր այս ազգակից-հասակակիցների նման նա էլ սիրեց Արևելքը, և եթե նախորդները տարվեցին Արևելքով մասնակիորեն, ապա Բրոսսեն դարձավ Արևելքի երկու հետաքրքիր ժողովուրդների՝ Հայերի և վրացիների աստվածային նվիրվածություն ունեցող որդեգիրը, հիրավի նաև հարադատ գավակը:

ВЫДАЮЩИЙСЯ ФРАНЦУЗСКИЙ АРМЕНОВЕД

(К 200-летию со дня рождения Мари Броссе)

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Резюме

Известный французский арменовед, грузиновед, востоковед Мари Фелисите Броссе, действительный член Российской императорской академии, член археологических, этнографических и географических обществ, обладатель многочисленных первостепенных орденов и наград, член Академии мхитаристов в Венеции и Московского Лазаревского института восточных языков. Всего этого ученый удостоился за огромные научные заслуги, которые многократно оценивались в грузиноведении. Наивысшая заслуга Мари Броссе в арменоведении заключается в представлении исторических памятников армянского народа как мирового достояния. М. Броссе – первый крупный ученый, который детально исследовал армяно-грузинские историко-культурные взаимосвязи в период средневековья.

²⁸ Գաստոն Բուաչիձե. Մարի Բրոսսե. Թբիլիսի, 1983.

THE PROMINENT FRENCH ARMENOLOGIST
(To the bicentenary of Marie Brosset's birth)

AELITA DOLUKHANYAN

S u m m a r y

The eminent French expert in Armenian, Georgian and Oriental studies Marie-Felicite Brosset, member of the Russian Imperial Academy, member of archaeological, ethnographical and geographical societies, holder of many supreme orders and rewards, member of the Mekhitarist Academy of Venice and the Lazarev Institute of Oriental Languages in Moscow, deserved all these titles for his immense scholarly achievements, the Georgian aspect of which has been systematically evaluated for many times. Brosset approached Armenian studies from many aspects but his greatest achievement is the internationalization of the historical monuments of the Armenian people. Brosset was the first prominent scholar who studied in detail the Armenian-Georgian historical and cultural relationship, pointing to very interesting medieval relations between those two peoples.